ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից ղեկավարի իշխանության դրդապատճառի առանձնահատկությունների ուսումնասիրման խնդիրը մի շարք գիտական առարկաների /սոցիալական հոգեբանության, անձի հոգեբանության, զարգացման հոգեբանության, կառավարման հոգեբանության և քաղաքական հոգեբանության/ ուշադրության կենտրոնում է գտնվում, իսկ դրա արդյունավետ լուծումը պահանջում է ինչպես դրանցից յուրաքանչյուրի, այնպես էլ իրական կառավարչական գործունեության հատուկ պրոյեկցիա: Նշված տեսանկյուններից խնդրի դիտարկման առանձնահատկությունը ենթադրում է.

ա) ղեկավարի իշխանության դետերմինացվածության հոգեբանական ասպեկտների համակողմանի տեսական վերլուծություն

բ) իշխանության դրդապատճառի ձևավորման խնդրի համալիրի դիտարկման ապահովում՝ հաշվի առնելով այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են փորձը, տարիքը, սեռային տարբերությունները, կրթության և դաստիարակության առանձնահատկությունները և այլն

գ) ղեկավարի անձի և գործունեության հետազոտում նրա կողմից կառավարչական գործունեության մեջ մասնագիտական հմտության հասնելու տեսանկյունից:

Այս խնդրի հետազոտման արդիականությունը պայմանավորված է կիրառական տեսանկյունով, քանի որ սովորաբար ղեկավարն ունի իշխանություն ենթակաների հանդեպ, այդ պատճառով էլ վերջիններս նրանից են կախված այնպիսի հարցերում, ինչպիսիք են աշխատանքային առաջադրանքի բովանդակությունը, աշխատավարձի բարձրացումը, պաշտոնի բարձրացումը և այլն: Սակայն որոշ դեպքերում ենթակաները իշխանություն ունեն ղեկավարի նկատմամբ, քանի որ ղեկավարները նրանցից կախված են այնպիսի հարցերում, ինչպիսիք են համագործակցությունը, հավաստի տեղեկատվության ստացումը և այլն: Հաջողակ ղեկավարը միշտ կպահպանի ենթակաների հանդեպ իշխանության և նրանցից իր

կախվածության միջև հավասարակշռությունը: Իշխանություն իրականացնելով՝ նա հոգ կտանի խմբային նպատակների իրականացման, դրանց հասնելու միջոցների հարցում խմբին աջակցելու մասին: Բոլոր հայտնի իշխանության հիմքերը գործիքներ են, որոնց օգնությամբ ղեկավարը կարող է ենթականերին ստիպել կատարել աշխատանքը, որն ուղղված է կազմակերպության նպատակների իրականացմանը: Նրանք ևս միջոցներ են, որոնք կարող են օգտագործվել ոչ ֆորմալ լիդերների կողմից՝ այդ նպատակների իրագործմանը խոչընդոտելու համար: Իշխանության յուրաքանչյուր ձև իր առավելությունները և թերություններն ունի, այդ պատճառով էլ առաջանում է նրա դրդապատճառային դետերմինանտների հիմնարար դիտարկման անհրաժեշտություն:

Տեսականորեն իշխանության դրդապատճառի հետ կապված երևույթները ըմբռնման, կանխատեսման և բացատրման համար շատ ավելի բարդ են, քան այն երևույթները, որոնք վերաբերում են աֆիլիացիային և հաջողությունների հասնելուն, քանի որ իշխանությունը բազմաչափ երևույթ է: Կառավարման բնագավառում իշխանության դրդապատճառի ուսումնասիրման մեկ այլ առանձնահատկություն, ինչը մեր աշխատանքի հիմնական նպատակն է, հանդիսանում է այն, որ այս դեպքում հնարավոր չէ սահմանափակվել գործունեության միայն տվյալ ոլորտի վերլուծությամբ:

Գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հենց սկզբից իշխանության ձգտումը ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից, այսպես Գ. Մյուրեյն[9] իր հետազոտություններում խոսում է գերակայության պահանջմունքի մասին, իսկ Ժ. Վերոֆֆը իշխանության դրդապատճառի տակ հասկանում է այլ անձանց վերահսկելուց բավականություն ստանալու ձգտումը և ընդունակությունը:

Լ. Գոզմանի[5] խմբագրությամբ քրեստոմատիայի վերլուծության ժամանակ կարելի է առանձնացնել այն, որ Զ. Յուլեմանը ներմուծել է «ազդեցության պահանջարկ» առաջադիմական հասկացությունը. այստեղ առաջին պլանում են իշխանության գործողությունները, որոնք ընկալվում են որպես եռանդուն, փոխադարձ սպառնալիքներ ստեղծող փոխազդեցություններ, որոնք թույլ չեն տալիս ոչ մի վախ և պահանջում են քաջություն երկու կողմերից էլ: Դ. Վինթերը «սոցիալական իշխանության» տակ հասկանում էր այլ մարդու վարքագծում և ապրումներում ցանկալի արդյունք առաջացնելու ընդունակությունը: Դ. Մաքքլելլանդը իշխանության դրդա-

պատճառը սահմանում է որպես ուժեղ զգալու և սեփական հզորությունը գործողության ժամանակ դրսևորելու պահանջմունք:

Այլ մարդկանց վրա ազդելը ուժեղ զգալու պահանջմունքի բավարարման բազմաթիվ եղանակներից միայն մեկն է: Հեկհաուզենը խոսում է իշխանության ձգտման մասին՝ որպես մարդու վարքագծի դրդիչ. իշխանության գործողությունը միշտ այլ մարդու բավարարված կամ չբավարարված մոտիվների նպատակաուղղված օգտագործումն է՝ անկախ դրանց բովանդակությունից:

Վերջին տասնամյակների հետազոտությունների շրջանակներում, որոնք կապված են իշխանության դրդապատճառի հասկացության սահմանների որոշման և տարբերակման հետ, դրանք ևս հակասական են: Այսպես կոչված հուբրիստական պահանջմունքը /hubris-հունարեն նշանակում է կատարելաության ձգտում զարգացման ուղղորդվածություն, ձեռքբերումների, ինքնորոշման պահաջմունք/, որը հեղինակների կողմից առանձնացվում է, որպես մարդու գործունեությունը խթանող կարևորագույն մոտիվացիաներից մեկը, բնորոշվում է որպես իշխանության և ընտրյալության անխախտ ձգտում, հասարակությունում հզորություն ձեռք բերելու ցանկություն[4]: Այստեղ նշվում է, որ հուբրիստական դրդապատճառից ուժեղ է միայն մարդու իշխանության ձգտումը /կամ սահմանային դրդապատճառ/, որը համարվում է եսասիրական և հաճախ նույնիսկ սադիստական ուժ և իշխանությանն հասնելը չի կարող մինչև վերջ բավարարել անհատին:

Այս հարցի վերաբերյալ մի շարք այլ աշխատություններում չի նշվում իշխանության պահանջարկի բացասական բնույթը և նկատվում է այս երևույթը դրական տեսանկյունից դիտարկելու հակում: Նրա տեսանկյունից իշխանության պահանջմունքը ըստ էության հանդիսանում է կվազի-պահանջմունք (կեղծ պահանջմունք), որը ձևավորվում է անհատի հինգ հիմնարար պահանջմունքներից /անհատ լինելու պահանջմունք, ինքնահարգման պահանջմունք, գեղոնիստական պահանջմունք, ինքնարտահայտման պահանջմունք, ազատության պահանջմունք/, որոնք միավորվելով կազմում են որակապես նոր երևույթ՝ իշխանության պահանջմունք[7]:

Այսպիսով, ավելի ուժեղ և ազդեցիկ երևալու, մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունների վրա ազդեցություն ունենալու մարդու ձգտման մեջ կարող են ներառվել բազմաթիվ տարբեր մոտիվներ իշխանության մոտիվացիայից բացի, այդ պատճառով էլ միշտ հեշտ չէ հստակորեն

պատկերացնել իշխանության դրսևորումների դրդող բոլոր հնարավոր դրդապատճառների կառուցվածքը և հիերարխիան: Այդ պատճառով պետք է դիմել գոյություն ունեցող տեսական և փորձարարական մշակումներին, որոնք կապված են իշխանության մոտիվացիայի անհատական տարբերությունների առանձնացման հետ և որոնք հաշվի են առնում կամ անտեսում են այս մոտիվացիայի վերը նշված բազմակերպ (պոլիմորֆ) բնույթը: Հիմնվելով մոտիվացիայի, առաջին հերթին մարդու առավել կարևոր սոցիալական մոտիվների, այդ թվում ձեռքբերման, աֆիլիացիայի, իշխանության մոտիվացիայի բնագավառում հոգեբանների մի շարք գիտական մշակումների վրա [4, 9, 11]՝ մենք եկել ենք այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ է շեշտը դնել իշխանության մոտիվացիայի բևեռային բնույթի վրա՝ առանձնացնելով երկու ենթախմբեր՝ իշխանության ձգտումը և իշխանությունից խուսափումը: Այնուհետև նման բաժանման հիման վրա կիրառել սեմանտիկ դիֆերենցիալի մեթոդը ղեկավարի իշխանության մոտիվացիայի բնորոշ դրսևորումների գնահատման հարցաշարի կազմման համար: Դրանով մենք լուծեցինք մեր առջև դրված խնդիրներից մեկը:

Ընդհանուր առմամբ, որպես իշխանության դրդապատճառի գործող սահմանում, մենք ընդունում ենք հետևյալը. իշխանության դրդապատճառը ներքին և արտաքին ռեսուրսների նպատակաուղղված կենտրոնացումն է, որն ուղղված է ցանկալի արդյունքի և սեփական արդյունավետության և անհատական ազդեցիկության զգացմանը հասնելուն, այն շրջապատող իրականության վրա վերահսկողության հնարավորությունների ձգտման և խուսափման ամբիվալենտ համակարգ է: Իշխանության դրդապատճառի անհատական տարբերությունների ճանաչման բանագավառում հաջորդ խնդիրը կապված էր անհատի տիպերի առանձնացման հետ: Հենց տիպաբանությունների կառուցումը, տեսական իմաստավորումը և այնուհետև փորձարարական նյութի կուտակումը ժամանակակից հոգեբանությանը հնարավորություն է տվել մշակել իշխանության դրդապատճաքի ձևավորման և գործողության համալիր տեսություններ, ինչպես նաև առաջադրել անհատի և իշխանական հարաբերությունների զարգացման այլընտրանքային մոդելներ: Այսպես, երբ խոսքը գնում է իշխանական մարդու՝ միայն որպես հնարավոր տիպերից մեկի մասին, նկատվում է իշխանության հանդեպ վերաբերմունքում հակասականության գոյություն, որն ընկած է իշխանության ձգտումը մարդու առաջնային դրդիչներից մեկը համարող աշխատությունների հիմքում: Հենց նման աշխատությունների վրա մենք կանգ

կառնենք՝ դիտարկելով մեր կողմից առանձնացված ուղղություններից երկրորդը:

Ընդունելով առավելության հասնելու նպատակը՝ որպես բոլոր մարդկանց համար ամենաընդհանուր նպատակ՝ Ա. Ադլերը խոսում է մարդկանց երկու տիպի գոյության մասին: Առաջինների համար իրական երջանկությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մարդը տալիս է: Հասարակության հետ կապը ձեռք է բերվում միայն համատեղ խաղում, ընդհանուր աշխատանքում, համատեղ կյանքում շնորհիվ այն բանի, որ մարդն օգտակար է դառնում ուրիշների համար և դա սեփական արժեքավորության կայուն զգացում է առաջացնում: Կա նաև մարդկանց հակառակ տիպը, որոնց մարդկությունը և նրա բոլոր խնդիրներն օտար և հեռու են թվում: Չափազանց շատ զբաղվելով սեփական անձով և ձգտելով անձնական իշխանության, սակայն որոշակի կախվածության մեջ գտնվելով մարդկանցից՝ նրանք մարդկանց հաճախ իրենց թշնամիներն են համարում, որոնք իրենց միայն վատն են ցանկանում[1]:

Եթե Ադլերը որպես տրամաբանական բաժանում առաջ է քաշում "ես ուրիշների համար"-"ուրիշներն ինձ համար" փաստարկը, ապա Կ. Հորնին նախ և առաջ ելնում է "ուժ" և "թուլություն" հասկացություններից: Գերակայելու, հեղինակություն, հարստություն ձեռք բերելու, բերկեցության հասնելու ցանկությունն իհարկե ինքնին նևրոտիկ հակում չէ, ինչպես և սեր և նվիրվածություն ունենալու ցանկությունն ինքնին նևրոտիկ չէ: Նորմալ մարդու մոտ իշխանության զգացումը կարող է առաջանալ նրա գերակա ուժի իրացման արդյունքում՝ լինի դա ֆիզիկական ուժ, թե ընդունակություն կամ մտավոր կարողություններ, կամ հասունություն և իմաստություն: Իշխանության հանդեպ նրա ձգտումը կարող է առաջացնել նաև ինչ-որ հատուկ պատճառ, որը կապված է ընտանիքի, քաղաքական կամ մասնագիտական խմբի, հայրենիքի կամ գիտական գաղափարի հետ: Սակայն ուժի հանդեպ ոչ նևրոտիկ ձգտումը ծնվում է ուժից, իսկ նևրոտիկը՝ թուլությունից: Է. Ֆրոմը, համաձայնելով այն հանգամանքի հետ, որ իշխանության ծարավն իսկապես արմատավորված է ոչ թե ուժի, այլ թուլության մեջ, իշխանական վարքագծի տիպերի բաժանման ժամանակ ելնում է այլ դիխոտոմիայից: Իշխանության իրականացման ժամանակ կարևորվում են իշխանություն ունենալու և իշխանություն լինելու միջև տարբերությունները: Գրեթե մենք բոլորս, գոնե մեր կյանքի ինչ-որ փուլում, օգտագործում ենք իշխանությունը՝ դաստիարակելով երեխաներին, մասնակցություն ունենալով հիերարխիկ կազմված հասարակությունում: Ըստ գոյության

սկզբունքի՝ իշխանությունը հիմնվում է ոչ միայն նրա վրա, որ ինչ-որ անհատ իրավասու է կատարել որոշակի գործառույթներ, այլև հավասարաչափ նաև զարգացման և ինտեգրացիայի բարձր աստիճանի հասած անհատի էության վրա: Իշխանական մարդիկ ճառագայթում են իշխանությունը և նրանց պետք չէ հրամայել, սպառնալ կամ կաշառել: Դրանք զարգացման բարձր մակարդակ ունեցող մարդիկ են, որոնց տեսքն ինքնին, ավելին քան խոսքերը և գործերը, խոսում է այն մասին, թե ինչ կարող է դառնալ մարդը: Սակայն խոշոր և հիերարխիկ կառուցվածք ունեցող հասարակությունների մեծ մասում տեղի է ունենում իշխանության տարման գործընթաց: Իշխանության նախնական իրական կամ թվացյալ իրավասությունը անցնում է համազգեստին կամ կոչմանը, որը մարմնավորում է այն: Թագավորը, այս տերմինը կիրառենք որպես նման տիպի իշխանության սիմվոլ, կարող է լինել հիմար, արատավոր, չար մարդ, այսինքն՝ գերագույն չափով անիրավասու այն բանի համար, որ լինի իշխանություն, այնուամենայնիվ նա չունի իշխանություն[10]:

Այսպիսով, Ֆրոմմը առաջիններից մեկն էր, որ ներմուծում է իշխանական մարդու՝ որպես զարգացած, ամբողջական անհատի կերպարը: Իշխանության ճառագումը, որը նա ևս նշում է, ինչ-որ բանով համընկնում է Մ. Վեբերի, ավելի ուշ՝ Ս. Մոսկովիչիի խարիզմա հասկացության հետ: Իշխանական գործողությունների նրա դասակարգումը[2], ինչպես հայտնի է, հիմնված է լեգիտիմ, այսինքն՝ անհատների կողմից կառավարվող հռչակված, իշխանության աղբյուրների և իրականացման վրա: Դրանք մանրամասն չքննարկելով, քանի որ դա կշեռի դեպի դատողությունների նշածողը, կարելի է նշել, մասնավորապես, որ Հ. Խեկհաուզենը, որի տեսությանը մենք անդրադարձել ենք և դեռ բազմիցս կանդրադառնանք, իշխանության աղբյուրների տիրապետումն առանձնացրել է որպես իշխանության հաջող գործելու առաջին, չնայած ոչ հիմնական նախադրյալ:

Պետք է նշել ևս մեկ տիպաբանություն, որն առաջարկվել է Բ. Ռասսելի կողմից: Կարելի է ասել, որ նա ձևակերպել է իշխանության ամենահետաքրքիր սահմանումներից մեկը: Ցանկացած գործողությունների նպատակային արդյունքին հասնելը արդեն իսկ իշխանության դրսևորում է՝ անկախ այն բանից, թե արդյոք նման ձեռքբերումը հանգեցնում է այլ մարդկանց հետ բախման, թե՝ ոչ: Ռասսելի տիպաբանության մեջ առաջին հերթին մեր ուշադրությունը գրավեց նրա կողմից առաջ քաշված անձի տիպը, որը ժխտում է ինչպես ենթարկումը /հպատակությունը/, այնպես էլ՝ գերակայությունը: Իշխանության հանդեպ սերը, նրա կարծիքով,

ամենաուժեղ դրդիչներից մեկն է, սակայն այն բավական անհավասարաչափ է բաշխված մարդկանց միջև և հաճախ սահմանափակվում է շատ այլ՝ գիտության, հանգստի, բավականության հակումների կողմից[3]: Ի վերջո, մեր կողմից առանձնացված ուղղություններից երրորդը կապված է մարդու գործունեության հիմնական մոտիվների տարբեր համակցությունների և համադրությունների հետ: Այստեղ, նախ և առաջ, կարելի է տալ Բ. Շվալբեի[12] անունը, որը փորձարարական հետազոտություններ է անցկացրել՝ որոնելով ձեռքբերման, աֆիլիացիայի և իշխանության մոտիվների հարաբերակցությունները:

Դիտարկվող խնդրի շրջանակներում հատուկ ուշադրության է արժանի Ս.Բ. Կավերինի առաջարկած անհատի տիպանությունը, որը կապված է իշխանության հանդեպ վերաբերմունքի հետ[8]: Ընդունելով առանց բացառության յուրաքանչյուր մարդուն բնորոշ իշխանության հանդեպ պահանջմունքը, քանի որ այն իրենից ներկայացնում է անմիջապես մի քանի հիմնարար պահանջմունքների համադրություն, հեղինակը ընդգծում է իշխանության հանդեպ պահանջմունքի տարբեր ինտենսիվությունը, որը կապված է տարբեր պատճառների հետ՝թույլ նյարդային համակարգ, այլ գործունեությամբ լիովին կլանվելը: Ինքնին իշխանության հանդեպ վերաբերմունքը տարբեր է, ինչը հիմքեր է տալիս հետևյալ տիպաբանության ձևավորման համար՝ նոնկոնֆորմիստ, կոնֆերմիստ, բռնապետ, ավանտյուրիստ, դեմոկրատ:

Գիտական գրականության մեջ դիտարկված մոտիվացիոն միտումների համադրությունները հեռանկարային քայլ են անհատական տարբերությունների ուսումնասիրման գործում: Համալիր մոտեցման ևս մեկ փորձ, որն առավել մշակված է և ընդհանրացնում է բազմաթիվ հոգեբանական հետազոտությունների փորձը, ներկայացված է Հ. Խեկյաուզենի մոտիվացիայի տեսությունում:

Դրդապատճառի տեսանկյունից անհատական տարբերությունների վերլուծությունը Խեկիաուզենը համարում էր մոտիվացիայի և գործունեության հոգեբանության հիմնական խնդիրներից մեկը: Իշխանության հարաբերություններում անհատական տարբերությունների հիմքերը նա նախ և առաջ տեսնում էր վեց պարամետրերի փոխազդեցության արտահայտվածության տարբեր աստիճանի և հնարավոր համադրությունների մեջ:

Ընդհանրացնելով՝ կարելի է իշխանության դրդիչը պատկերացնել հետևյալ կերպ. իշխանության դրդիչն ուղղված է դեպի իշխանության աղբյուրների ձեռքբերումը և պահպանումը կա՛մ հանուն դրա հետ կապ-

ված հեղինակության և իշխանության զգացման, կա՛մ հանուն այլ մարդկանց վարքագծի և ապրումների վրա ազդեցության /այն կարող է լինել իշխանության դրդիչի ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ նպատակ/, որոնք ինքնուրույնաբար չէին վարվի սուբյեկտի համար ցանկալի կերպով: Այս ազդեցությունը պետք է այնպես փոխի նրանց վարքագիծը, որ այն նպաստի սուբյեկտի պահանջմունքների բավարարմանը: Դրա համար սուբյեկտը պետք է իշխանության գոյություն ունեցող աղբյուրներով և ազդեցության միջոցներով վերափոխի ուրիշի առավել կարևոր դրդիչների գրավչությունը, ընդ որում դա պետք է անի ավելի արդյունավետ և տնտեսող եղանակով: Այս գործունեությունն ինքնին կարող է համապատասխանել տարբեր մոտիվների: Այն կարող է կատարվել հանուն սեփական կամ ուրիշի բարօրության կամ էլ հանուն ինչ-որ գերագույն նպատակի, այն կարող է ուրիշին վնասել կամ օգուտ տալ:

Իշխանության անհատական դրդիչը սահմանափակ է ինչպես իշխանության ձեռքբերման, այնպես էլ՝ առանձին բովանդակային բնագավառներում դրա կիրառման առումով, որոնք կապված են իշխանության կոնկրետ աղբյուրների և ազդեցության ենթարկվող մարդկանց խմբերի հետ: Այն կարող է կրել նաև իշխանության ձեռքբերման, նրա կորստի, իշխանության պատասխան կիրառման կամ սեփական ազդեցության անհաջողության հետ կապված վախի դրոշմ[11]:

Այսպիսով, ելնելով վերը նշված դրույթներից, մեր հետազոտության շրջանակներում կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը. իշխանության ձգտումը ի հայտ է գալիս ոչ միայն որպես ուժեղ դրդիչ , այլ այն իշխանության սեփական աղբյուրների կիրառման միջոցների, եղանակների, դրանց բազմազանության, ինչպես նաև ազդեցության ադեկվատ միջոցների և իշխանության հաջող ազդեցության իրականացման ընդունակության միջև գոյություն ունեցող տարբերությունն է: Օրինաչափորեն հարց է ծագում այն մասին, թե ինչպես է ձևավորվում այդ ձգտումը, անհատական զարգացման ինչպիսի առանձնահատկություններ են որոշում իշխանության դրդապատճառը: Սակայն ուժի հանդեպ ոչ նևրոտիկ ձգտումը ծնվում է ուժից, իսկ նևրոտիկը՝ թուլությունից:

Ամփոփելով իշխանության դրդապատճառի բովանդակային բնութագրի և նրա ձևավորման առանձնահատկությունների խնդրի դիտարկումը՝ նշենք, որ մեր կարծիքով իշխանության դրդապատճառի զարգացման առանձնահատկությունների լուսաբանումը և ղեկավարի մոտ իշխանության դրդապատճառի ձևավորման օպտիմալացման արդյունավետ և

անհակասական տեխնոլոգիաների մշակումը հնարավոր է դառնում միայն համալիր հոգեբանաակմեոլոգիական մոտեցման կիրառման միջոցով: Հիմնվելով հայրենական հոգեբանության մեջ մշակված անհատի դրդապատճառային ոլորտի զարգացման հայեցակարգերի վրա, այն է՝ դրդապատճառային գործընթացի փուլային կայացում, տարիքային զարգացման ընթացքում դրդապատճառային ոլորտի կայացում, մասնագիտական աշխատանքի դրդապատճառային ոլորտի ձևավորում, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական վարժման՝ որպես ամբողջական համակարգի կառուցում[6], կարելի է առանձնացված խնդրի արդյունավետ լուծում գտնել և հաղթահարել հիմնական հակասությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Адлер А. Практика и теория индивидуальной психологии.: М, 1995.
2. Вебер М. Избранные произведения. М, Прогресс, 1990.
3. Власть: очерки современной политической философии Запада. Под ред. В.В.Мшвениерадзе, И.И.Кравченко и др.- М.: Наука, 1989.
4. Волков Ю.Г. Поликарпов В.С. Интегральная природа человека. Естественно-научный и гуманитарные аспекты. Р-н/Д: Изд-во рост.ун-та, 1993.
5. Гозман Л.Я., Шестопал Е.Б. Психология власти // Психология господства и подчинения. Хрестоматия, Мн: Харвест, 1998.
6. Деркач А.А., Зазыкин В.Г., Маркова А.К. Психология развития профессионала.-М., РАГС, 2000.
7. Искусство администрирования: практическое пособие /под ред.Д.Олкок. М., Финпресс, 1998.
8. Каверин С.Б. Что такое потребность власти? // Психология и психоанализ власти. Хрестоматия/ ред.Д.Я.Райгородского - Самара.: "Бахрах", 1999.
9. Мюррей Х.А. Исследование личности.// Сидоренко Е.В. Мотивационный тренинг. М., "Речь", 2000.
10. Фромм Э. Иметь или быть? - М.: Прогресс,1990.
11. Хекхаузен Х. Мотивация и деятельность. - М.: Педагогика, 1986.
12. Швальбе Х. Личность, карьера, успех.- М.: А/О Изд. Гр. "Прогресс-Интер", 1993.